# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կվանտա ՍՊԸ-ն ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/16 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 114 | վիրաբուժական թելեր | Լյուքսսուչրս | Թել ստերիլ վիրաբուժական, սինթետիկ, ներծծվող հյուսված: Պետք է պատրաստված լինի համապոլիմերից, որը բաղկացած է 90% գլիկոլիդից և 10% L-լակտիդից: Թելը պետք է պատված լինի համապոլիմերից՝ բաղկացած կալցիումի ստեարատի և պոլիկապրոլակտիդի խառնուրդից, ինչը հեշտացնում է թելի անցումը հյուսվածքներով: Թելը պետք է ներկված լինի կոնտրաստ գույնով վերքի մեջ լավագույն վիզուալիզացիան ապահովելու համար: Թելի պատռման ամրությունը IN VIVO պայմաններում 2 շաբաթից 75%±3%, 3 շաբաթից 50%±2%: Ամբողջությամբ ներծծման ժամկետը 56-70 օր:Առաձգական ուժի մոտավորապես 50%-ը մնում է 7 օր հետո: Մետրիկ չափը 2, պայմանական չափը 3/ 0: Թելի երկարությունը 90սմ ± 5սմ: Ասեղը պետք է պատրաստված լինի կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքից, պատված լինի սիլիկոնի կրկնակի շերտով, որը նպաստում է ասեղի և հյուսվածքների միջև շփման նվազեցմանը և հեշտացնում է ասեղի անցումը հյուսվածքներով: Համաձուլվածքի որակը չպետք է զիջի AISI դասակարգումով 302 սերիայի համաձուլվածքի որակին: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ասեղը պետք է ունենա այնպիսի կառուցվածք /հատուկ երկայնական ակոսիկներ ասեղնաբռնիչով բռնելու մասում/, որի շնորհիվ վստահելի ֆիքսվում է ասեղնաբռնիչի մեջ: Ասեղը ծակող, 1/2 կորության,26±1 մմ երկարությամբ,: Փաթեթավորումը պետք է ապահովի հասանելիություն ներքին ներդիրին մեկ շարժումով՝ թելի հետ աշխատելիս խնայելով ժամանակ բուժ անձնակազմի համար: Ստերիլ կարանյութով ներքին ներդիրը պետք է պարունակի մակնշում, որն արծարծում է կարանյութի անվանումը, բաղադրությունը, ապրանքային նշանը, արտադրողի ապրանքանշանը, արտադրողի անվանումը, մատրիցային կոդ, թելի պայմանական և մետրիկ չափը, գույնը, երկարությունը, թելերի քանակը, ասեղի երկարությունը, ասեղի տեսակը, կորությունը, ասեղների քանակը: Պիտանելիության ժամկետը, պարտիայի համարը, ասեղի տեսքը բնական չափերով, ստերիլության և ստերիլիզացման մեթոդի վերաբերյալ մակնշում: Ամեն տուփը պետք է պարունակի բժշկական կիրառման ուղեցույց: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատների առկայություն |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Кванта в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/16 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 114 | | | |